

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.



- 1) լեռնագիծ
- 2) ռելիեֆի կտրվածք (պրոֆիլ)
- 3) հորիզոնական
- 4) համադրման սանդղակ

2 Հյուսիսարևմտյան կողմի ազիմուտը հավասար է.

- 1) 180°
- 2) 135°
- 3) 45°
- 4) 315°

3 Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 3,7 սմ է, իսկ իրականում՝ 1850 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.

- 1) 1 : 50 000
- 2) 1 : 500 000
- 3) 1 : 5 000 000
- 4) 1 : 50 000 000

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
- 2) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 3) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
- 4) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտին 1 ժամով առաջ է նախորդից:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկը կատարել 5°-ով).

77 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

75 Քարտեզում ՀՀ կլիմայի ո՞ր տիպն է նշված Ա տառով.



- 1) ցուրտ լեռնային
- 2) ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային
- 3) բարեխառն լեռնային
- 4) չոր խիստ ցամաքային

76 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 690 000 գ, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 30 000 հա: Որքա՞ն կլիմի միջին բերքատվությունը:

5 Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.

- 1) մագմա
- 2) լավա
- 3) մղանցք
- 4) խառնարան

6 Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունը կոչվում է.

- 1) մթնոլորտային ճնշում
- 2) կլիմա
- 3) օդային զանգված
- 4) ամպամածություն


7 Լավային հոսքից կամ լեռնալանջի փլվածքից գետի հունը փակվելու հետևանքով առաջացած լիճը կոչվում է.

- 1) արգելափակման
- 2) խառնարանային
- 3) հնահունային
- 4) մնացորդային

8 Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի + 11°-ի, եթե նույն պահին Արագածի գագաթին – 4° է (յուրաքանչյուր 1000 մ-ին ջերմաստիճանի փոփոխությունն ընդունել 5°).


- 1) 1090 մ
- 2) 1900 մ
- 3) 1009 մ
- 4) 1000 մ

9 Նկարում հարթավայրի ո՞ր տեսակն է պատկերված Ա տառով.



- 1) ցածրավայր
- 2) դաշտավայր
- 3) բարձրավայր
- 4) սարահարթ

10 «Քամիների վարդում» հորիզոնի ո՞ր կողմից է ամենից շատ փչել քամին.



- 1) հյուսիսարևելյան
- 2) հյուսիսարևմտյան
- 3) հարավարևելյան
- 4) հարավարևմտյան

11 «Մայրցամաք — թերակղզի» գույգերից ընտրել սխալը.

- 1) Աֆրիկա — Սոմալի
- 2) Եվրասիա — Ալյասկա
- 3) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա
- 4) Ավստրալիա — Քեյփ Յորք

12 Ճնապողգուլային հողերը բնորոշ են.

- 1) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին
- 2) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին
- 3) մերձարևադարձային գոտու սավաննաների և նոսր անտառների տարածման շրջաններին
- 4) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին

71 Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Նիդերլանդները և Իրանը
- 2) Ֆրանսիան և Գերմանիան
- 3) Եգիպտոսը և Թուրքիան
- 4) Լեհաստանը և Չեխիան

72 Հողերի երոզիայի պատճառ կարող են լինել.

- 1) արոտավայրերի գերարածեցումը
- 2) աղակալած հողերի լվացումը
- 3) ագրոանտառաբարելավումը
- 4) քարամաքրումը

73 Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներ են.

- 1) ապարների քայքայումը
- 2) արդյունաբերությունը
- 3) փոշեհողմերը
- 4) հրաբխի ժայթքումը

74 Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.



- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

- 66 **ՀՀ կլիմայի վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
 - 2) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
 - 3) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին:
 - 4) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):

- 67 **ՀՀ բնակչության վերաբերյալ n^o ր պնդումն է սխալ.**
- 1) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98 %-ը հայեր):
 - 2) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
 - 3) Ամենաբարձրադիր բնակավայրը Տավուշի մարզում է:
 - 4) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:

- 68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
 - 2) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջեկերը:
 - 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:
 - 4) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:

- 69 **Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.**
- 1) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:
 - 2) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:
 - 3) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:
 - 4) Հարուստ են անտառային ռեսուրսներով:

- 70 **Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.**
- 1) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը
 - 2) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները
 - 3) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները
 - 4) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները

- 13 **Այս սառը օվկիանոսային հոսանքը ձգվում է Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափերի երկայնքով և ունի հյուսիսից հարավ ուղղություն: Այն ողողում է համանուն կղզեխմբի ափերը: Ո՞ր հոսանքն է.**
- 1) Ասեդի հրվանդանի
 - 2) Լաբրադորյան
 - 3) Սոմալիի
 - 4) Կանարյան

- 14 **Ո՞ր պնդումն է սխալ.**
- 1) Կարմիր ծովը ողողում է երկու աշխարհամասերի ափեր:
 - 2) Միջերկրական ծովը ողողում է երեք աշխարհամասերի ափեր:
 - 3) Զիբրալթարի նեղուցը միացնում է երկու օվկիանոսների ջրեր:
 - 4) Սուեզի պարանոցը միացնում է երկու մայրցամաք:


- 15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Մուսսոնը օրվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
 - 2) Լեռնահովտային քամիներն ակտիվանում են հատկապես տարվա ցուրտ կեսին:
 - 3) Պասսատը տարվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
 - 4) Արևմտյան քամին արևադարձային լայնություններից դեպի բարեխառն լայնություններ փչող քամին է:

- 16 **«Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Մեծ հարթավայրեր — Ասիա
 - 2) Պադանի դաշտավայր — Ավստրալիա և Օվկիանիա
 - 3) Մերձատլանտյան դաշտավայր — Ամերիկա
 - 4) Գվիանական սարահարթ — Աֆրիկա

- 17 **«Գետ — վտակ» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Վոլգա — Դնեստր
 - 2) Միսիսիպի — Սուրբ Լավրենտիոս
 - 3) Նիգեր — Շարի
 - 4) Ամազոն — Մարանիոն

- 18 **Լավրասիայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**
- 1) Չինականը
 - 2) Հնդկականը
 - 3) Աֆրիկա-Արաբականը
 - 4) Հարավամերիկյանը

19 Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.



- 1) Պարանա
- 2) Օրինկո
- 3) Ամազոն
- 4) Պարագվայ

20 Քարտեզում Ը տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Բոլիվիա
- 2) Կոլումբիա
- 3) Ուրուգվայ
- 4) Պերու

21 Այն երևույթը, երբ բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիությանը, առկա է բնակչության նեղ վերարտադրություն և բնակչության թվի նվազում, կոչվում է.

- 1) ժողովրդագրական իրավիճակ
- 2) ժողովրդագրական պայթյուն
- 3) ժողովրդագրական ճգնաժամ
- 4) ժողովրդագրական արտահոսք

62 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 2) Բնակչության թվով երկրորդ ազգը պարսիկներն են:
- 3) Բնակչության թվով ամենամեծ քաղաքը Անկարան է:
- 4) Առավել խիտ են բնակեցված երկրի արևելյան շրջանները:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

Այս պետությունն աշխարհի առաջատարներից է նավթի արդյունահանմամբ և արտահանմամբ: Բնակչության մեծամասնությունը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Երկրի ներքին շրջանները բնութագրվում են չոր մերձարևադարձային ու արևադարձային կլիմայով: Աշխարհի առաջատարներից է ոչխարների և այծերի գլխաքանակով: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Թուրքիան
- 2) Իրաքը
- 3) Սաուդյան Արաբիան
- 4) Իրանը

64 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից:
- 2) Հայկական լեռնաշխարհում տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
- 3) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 400–500 մմ է:
- 4) Միջլեռնային գոգավորություններում ամռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:

65 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավ–արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:
- 2) Զբաղեցնում է մոտ 29 հազ. քառ. կմ մակերես:
- 3) Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:
- 4) Հարավում տարածվում է Կուր–արաքսյան դաշտավայրը:

56 Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ավերի կլիման.

- 1) չոր մերձարևադարձային է
- 2) խոնավ մերձարևադարձային է
- 3) միջերկրածովային է
- 4) մուսսոնային է

57 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կիլիմանջարոն գործող հրաբուխ է:
- 2) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
- 3) Աֆրիկայի ամենախոնավ շրջանը Դրակոնյան լեռների հյուսիսարևելյան լանջերն են:
- 4) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը (+58,1°) գրանցվել է հասարակածային գոտում:

58 Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.

- 1) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ
- 2) Ինդոս, Եփրատ, Գանգես
- 3) Դանուբ, Կուր, Ամուր
- 4) Օբ, Ենիսեյ, Լենա

59 Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Բանգլադեշը և Հնդկաստանը
- 2) Կամերունը և Պակիստանը
- 3) Նիգերիան և Կոնգոն
- 4) Իտալիան և Ճապոնիան

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հինդուիզմը և սինտոիզմը ազգային կրոններ են:
- 2) Իրանի բնակչության մեծ մասը դավանում են իսլամի շիա ուղղությունը:
- 3) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:
- 4) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:

61 Ածուխ արդյունահանող առաջատար երկիր է.

- 1) Հնդկաստանը
- 2) Բանգլադեշը
- 3) Պակիստանը
- 4) Աֆղանստանը

22 Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական, մշակութային և ինքնության զգացողության ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է.

- 1) վերարտադրություն
- 2) ազգային համախմբում
- 3) միգրացիա
- 4) ազգերի միաձուլում

23 Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրաէներգիայի զգալի մասը արտադրվում է աեկներում: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) ՌԴ-ն
- 2) Ֆրանսիան
- 3) Գերմանիան
- 4) Իսպանիան

24 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 10 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 25 մլն: Երկրի ուրբանիզացման մակարդակը կկազմի.

- 1) 50 %
- 2) 40 %
- 3) 25 %
- 4) 10 %

25 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) թուրք — մահմեդականություն
- 2) իտալացի — քրիստոնեություն
- 3) հրեա — բուդդայականություն
- 4) չինացի — դաոսականություն

26 «Պետություն — մայրաքաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Բուլղարիա — Բուդապեշտ
- 2) Լիտվա — Վիլնյուս
- 3) Սերբիա — Զագրեբ
- 4) Թուրքիա — Ստամբուլ

27

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) հաստոց —մետաղաձուլություն
- 2) պլաստմասսա — մեքենաշինություն
- 3) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 4) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն

28

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աղքատ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 3) Անդրիբանական գազամուղով երկիրը Եվրոպայից գազ է ներմուծում:
- 4) Երկրի հավատացյալ բնակչության 90 %-ը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը:

29

Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

- 1) Նիգերիային և Ռուանդային
- 2) Ռուսաստանին և Ուկրաինային
- 3) Ֆրանսիային և Գերմանիային
- 4) ԱՄՆ-ին և Կանադային

30

Ունիտար պետություններ են.

- 1) Գերմանիան և ՌԴ-ն
- 2) Կանադան և Ֆրանսիան
- 3) Հայաստանը և Ճապոնիան
- 4) ԱՄՆ-ը և Ավստրալիան

31

«Պետություն — ջրաէլեկտրակայան» գույգերից ընտրել սխալը.

- 1) Չինաստան — Երեք կիրճեր
- 2) ՌԴ — Կրասնոյարսկ
- 3) Բրազիլիա — Իտայպու
- 4) Բելառուս — Բրատսկ

32

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհում թելատու մշակաբույսերից ամենատարածվածը վուշն է:
- 2) Նոր զարգացող երկրների գյուղատնտեսությունը զարգանում է ինտենսիվ ուղիով:
- 3) Ցորենի ցանքատարածությունների տեղաբաշխումը համընկնում է բրնձի ցանքատարածություններին:
- 4) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերին բաժին է ընկնում ամբողջ մշակվող հողատարածքների ավելի քան կեսը:

Բ մակարդակ

51

Մեպտեմբերի 23-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հասարակածային լայնությունները
- 2) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները
- 3) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 4) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները

52

Երևան (արլ. ե. 44°30') և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 1 ժամ
- 2) 2 ժամ
- 3) 3 ժամ
- 4) 4 ժամ

53

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հս. լ. 66°30'–ից հյուսիս և հվ. լ. 66°30'–ից հարավ բևեռային գիշերների ու ցերեկների տևողությունը կրճատվում է:
- 2) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 3) Երևանի գոտիական ժամանակն առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
- 4) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:

54

Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդումը.

- 1) բարեխառն ծովային կլիմա — 800–1000 մմ տեղումներ — լայնատերև անտառ
- 2) մերձարկտիկական կլիմա — 200–300 մմ տեղումներ — տափաստան
- 3) բարեխառն մուսսոնային կլիմա — 600–800 մմ տեղումներ — սավաննա
- 4) արևադարձային կլիմա — 400–500 մմ տեղումներ — անապատներ


55

Ո՞ր շարքի ջրային ավազաններն են պատկանում Հնդկական օվկիանոսին.

- 1) Կարմիր ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 2) Բենգալական ծոց, Արաբական ծով, Դեղին ծով
- 3) Ադենի ծոց, Կարմիր ծով, Դեղին ծով
- 4) Հարավչինական ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց

49

Ո՞ր լեռնանցքն է քարտեզում նշված *Բ* տառով.



- 1) Մելիմի
- 2) Սևանի
- 3) Ջաջուռի
- 4) Պուշկինի

50

Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Մեծամորի
- 2) Քանաքեռի
- 3) Վանաձորի
- 4) Արզնու

33

Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Ավստրիան և Հունգարիան
- 2) Հնդկաստանը և Բանգլադեշը
- 3) Քենիան և Եթովպիան
- 4) Իրանը և Սիրիան

34

Պողպատի արտադրությամբ առաջատար երկրներ են.

- 1) Իտալիան և Իրանը
- 2) Չինաստանը և Ճապոնիան
- 3) Հնդկաստանը և Պակիստանը
- 4) Կանադան և Բրազիլիան

35

Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի մեջ չի մտնում.

- 1) Կարսի սարահարթը
- 2) Սյունիքի բարձրավանդակը
- 3) Գեղամա լեռնավահանը
- 4) Արարատ լեռնազանգվածը

36

«Գետ — հոսքի ավազան» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Տիգրիս — Կասպից ծով
- 2) Ճորոխ — Սև ծով
- 3) Եփրատ — Կասպից ծով
- 4) Արաքս — Պարսից ծոց

37

ՀՀ-ում ամենաշատ տեղումները լինում են.

- 1) բարեխառն լեռնային կլիմայի տիպում
- 2) ցուրտ լեռնային կլիմայի տիպում
- 3) խիստ ցուրտ (ձյունամերձ) կլիմայի տիպում
- 4) չափավոր շոգ կլիմայի տիպում

38

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:
- 2) ՀՀ-ում կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 3) ՀՀ-ում հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
- 4) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

- 39 **Ո՞ր պնդումն է սխալ.**
- 1) ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ բաժինը պայմանավորված է հիմնականում մակերևույթի լեռնային բնույթով:
 - 2) ՀՀ գինու-կոնյակի արտադրությունը հիմնականում տեղաբաշխված է արտադրանքի սպառման շրջաններում:
 - 3) ՀՀ-ում պտղաբուծությամբ զբաղվում են բոլոր շրջաններում՝ մինչև 2100 մ բարձրությունները:
 - 4) ՀՀ ոչխարաբուծությունը հիմնականում տեղաբաշխված է նախալեռնային և լեռնային շրջաններում:

- 40 **ՀՀ տրանսպորտում բեռնաշրջանառությամբ առաջինն է.**
- 1) երկաթուղային տրանսպորտը
 - 2) ավտոմոբիլային տրանսպորտը
 - 3) օդային տրանսպորտը
 - 4) գետային տրանսպորտը

- 41 **Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.**
- 1) կիսաանապատային
 - 2) անտառային
 - 3) ավայան և մերձավայան
 - 4) լեռնատափաստանային

- 42 **Կոտայքի մարզը արդյունաբերության ո՞ր արտադրությամբ հանրապետությունում առաջատար դեր չի խաղում.**
- 1) հանքային ջրերի արտադրություն
 - 2) ցեմենտի արտադրություն
 - 3) էլեկտրաէներգետիկա
 - 4) պահածոների արտադրություն

- 43 **ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունը ամենաբարձրը.**
- 1) 1000–1500 մ
 - 2) 2000–2500 մ
 - 3) մինչև 1000 մ
 - 4) 1500–2000 մ

- 44 **Քաղցրահամ ջրի պաշարներով հարուստ է.**
- 1) Սաուդյան Արաբիան
 - 2) Կանադան
 - 3) Ուզբեկստանը
 - 4) Իրանը

- 45 **Մթնոլորտի աղտոտվածության հետևանք չէ.**
- 1) թթվային անձրևը
 - 2) սմոգը
 - 3) ջերմոցային էֆեկտը
 - 4) ջերմաստիճանային շրջադասությունը

- 46 **Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.**
- 1) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
 - 2) ցեմենտի արտադրության ավելացումը
 - 3) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
 - 4) կանաչ տարածքների ընդարձակումը

- 47 **Հողաբարելավման միջոցառում(ներ) չէ(չեն).**
- 1) քարամաքրումը
 - 2) հակաէրոզիոն միջոցառումները
 - 3) քիմիական մելիորացիան
 - 4) թեք լանջերի երկայնակի հերկումը

- 48 **Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.**

- 1) բնական ռեսուրսներ
- 2) արտադրողական ուժեր
- 3) բնական պայմաններ
- 4) աշխատանքի միջոցներ